

Knowledge & power
of the world
of the world
of the world

491.99(077)
U-70

3-4183a 18 MAY 2010

ԱՌԱՆՁԻՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՃԱԿՈՒՄՆԵՐԻ
═══════ ԺՈՂՈՎԱԾՈՒ ═══════

(ՅՈԹՆԱՄՅԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՅԵՎ
ՅԵՐԿՐՈՐԴ ԿՈՆՑԵՆՏՐԻ ՀԱՄԱՐ)

I պրակ

*ԵՑ մեզ պարտաճանաչ
եղև ինք*

ԳԻՆԸ 80 ԿՈՊ.

491.99(07)
Ա-70

4. Ընթերցանությունից հետո ուսուցիչն անցնում է ընթերցածի ստուգման, համոզվելու համար, արդյոք բոլոր աշակերտներն էն հաս-
կացել կարգացածի բովանդակությունը: Ստուգումը տեղի է ունենում հարցերի միջոցով (5 բուպե):

4. Դրանից հետո ուսուցիչն ինքն է կարդում պատմվածքը: Պատմը-
վածքը կարդացվում է հասկանալի և առողանությամբ՝ միջին աշա-
կերտի ընթերցանության արագության համապատասխան: Աշակերտ-
ները հետաքրքրությամբ լսում են ընթերցանությունը (2—3 բուպե):

5. Առաջադրվում է նույն պատմվածքը ամբողջությամբ կարդալու
մեկ աշակերտի: Աշակերտի կարդալու ժամանակ՝ մնացածները հետե-
վում են իրենց գրքով (ընթերցողին): Ուսուցիչն ուղարկությամբ հե-
տևում է ընթերցողին և յեթե անհրաժեշտ է գտնում ուղղումը, ապա
չխանգարելով ընթերցողին՝ ուղղում է սխալը: Կարելի է պահանջել
3—4 աշակերտի՝ կարդալու: Կարդացողներն անհրաժեշտ է լինեն՝ լավ,
միջակ և թույլ աշակերտներից (10 բուպե):

6. Ընթերցանությունից հետո ուսուցիչն առաջադրում է աշակերտ-
ներին տետրի մեջ նկարներ գծեն՝ կարդացած նյութին համապատաս-
խան: Նկարելու ժամանակ ոգտվում են գրքից և հարկ յեղած դեպ-
քում նորից կարդում: Նախ քան նկարելը, ուսուցիչը մատնանշում է
նկարելու իսկական տեղը, վոր մեծության պետք է լինի նկարը և վոր
մատիաներով կատարեն այս կամ այն աշխատանքը: Նկարելուց առաջ
ուսուցիչը կրկին անգամ ավելի մանրամասը բացատրում է պատմը-
վածքի բովանդակությունը, վոր նկարը իսկապես համապատասխանի
պատմվածքի բովանդակությանը և չբարդացնե աշակերտի աշխա-
տանքը:

7. Աշակերտների աշխատանքի տեմպերը պարզ է վոր կլինեն տար-
բեր, մեկը շուտ կվերջացնի աշխատանքը, մյուսը՝ ուշ: Վորպեսզի ու-
սուցման ժամն ավելի խտացնվի, ուսուցիչը շուտ վերջացնող աշա-
կերտներից կազմակերպում է նրանց ընթերցանության տեխնիկայի
վարժեցումը: Աշակերտները հաջորդաբար ստուգման են յենթարկվում:

8. Նկարը վերջացնելուց հետո (բոլոր աշակերտներով) ուսուցիչը
կազմակերպում է շատ համառոտ զրույց՝ նկարներով (նույն աշակերտ-
ների նկարածով): Այս աշխատանքը հետապնդում գծագրության կա-
տարման ստուգումը, պատմվածքի բովանդակության լիակատար ըմ-
բռնումը և ընթերցածի ել ավելի ամբողջումը յերեխաների հասկա-
ցողության մեջ (6, 7, 8—15—17 բուպե):

9. Մնացած աշխատանքը տարվում է՝ բառակազմության և տողա-
գարձի շուրջը: Ուսուցիչը ձեռքն է առնում, նախորդ կարգոնի վրա
պատրաստած բառերը, բառերն անհրաժեշտ է վերցնել կարդացած
պատմվածքից: Ուսուցիչը հերթով ձեռքն է վերցնում կարդոնի (վրա-
յի) նկարները, բոլոր աշակերտների առաջ և աշակերտներին առաջար-
կում է արտասանելու (նկարի) բառը: Բառերի տողագարձի նախնա-
կան վարժություն—10 բուպե:

10. Հետո տեղի յե ունենում բառերի վանկերի բաժանման վար-
ժությունները (աչքի առաջ ունենալով աշակերտների դժվարանալը
գրավորի ժամանակ): Աշակերտները կարդոններով ստանում են մի-
մի վանկերի խումբ: Մեկ վանկերի խումբը կարմիր գույնի յե, մյուս-
սինը՝ սև: Առաջադրվում է վերցնել կարմիր գույնի վանկը և նրան
գնել սև գույնի վանկը: Ստացվում են դանազան բառեր, նույն վան-

կերի տարբեր դասավորությունից: Ստացած բառերն աշակերտներն
արտագրում են սյունաձև և կարմիր վանկերի տակը ընդգծում:
Այդ վարժություններով աշակերտների ուղարկությունը տպավորվում
է վորոշ վանկերի վրա, ինչպես բառի մասի: Արտագրության ժամա-
նակ ուսուցիչն անցնում է բոլոր աշակերտների մոտ և դիտում է աշ-
խատանքի ընթացքի ճշտության վրա (20 բուպե):

11. Կազմակերպվում է բառերի լրացման խաղեր (գուշակելով վան-
կերը): Ուսուցիչը արտասանում է վորև է վանկ, աշակերտներն արա-
գությամբ պետք է լրացնեն բառը (10 բուպե):

12. Զանգից 5 բուպե շուտ, ուսուցիչը տալիս է բացատրում է տը-
նային առաջադրությունները (5 բուպե):

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԱԿԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԻ ՆԱԽԱԳԻԾԸ

ԹԵՄԱ. — Յեռանիս թվերի գումարումն յեվ հանումն
(3-րդ յեռանայակ)

ԴԱՍԻ ՆՊՍՏԱԿԸ

Ամբացնել յերեխաների հասկացողությունը թվի կազմի մասին և
յեռանի թվերի գումարման ու հանման նախնական ունակություն-
ներ տալ (մինչև թե հայի մշակումը սովորողները պետք է 100-ի սահ-
մանում բանավոր և գրավոր թվագրությունը հիմնովին իմանան):

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ 1 ԺԱՄ

Ուսուցիչի պատրաստությունը դասին.— պատրաստել կավիճ, սոխ-
թանաք, դասարանական համարակալ: Հաշվի առնել աշակերտների
անհատական պատրաստակալությունը: Մտածել— նախագծել, թե ինչ-
պես նոր թեմայի դասը կապել անցած, մշակած նյութերի հետ: Կար-
դալ այդ թեմայի հարցի շուրջը մաթեմատիկայի մեթոդիկան: Պատ-
րաստել որինակներ դասարանական և տնային վարժություններին
համար: Մտածել, թե ինչպես կազմակերպել յերեխաների աշխատան-
քը: Կազմել դասի համառոտ նախագիծը

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

1. Դասը սկսվում է 100-ի սահմանում բանավոր և գրավոր թվա-
գրության կրկնողությամբ և ստուգումով:

Ուսուցիչը գրում է գրատախտակի վրա յեռանի թվեր, աշակերտ-
ները հերթով կարդում են: Բոլոր յերեխաների կողմից յեռանի թվերի
ճիշտ կարդալու մեջ համոզվելու համար, անհրաժեշտ է վորքան հնա-
րավոր է շատ աշակերտների ստուգել: Դրանից հետո անհրաժեշտ է
անցնել համարակալի վրա վարժություններին: Ուսուցիչը համարակա-
լի վրա նշանակում է յեռանի թվեր, աշակերտները կարդում են: Ու-
սուցիչը յերկու աշակերտների հրավիրում է դասարանական համարա-
կալի մոտ, մեկը համարակալի վրա նշանակում է թվեր, իսկ մյուսը
կարդում է նույն թվերը՝ միաժամանակ գրում գրատախտակի վրա:
Մնացած աշակերտները նույն աշխատանքը կատարում են իրենց հա-
մարակալների վրա (դասի ժամանակ յուրաքանչյուրը համարակալ
պետք է ունենա) և թվերը գրում իրենց տետրների մեջ:

ՀԱՅԿ

Գրավորները ճշտութունը տեսրակները մեջ ստուգելու համար ոչ սուցիչը այցելում է բոլոր աշակերտներին: Գրելու կարգը նախորդ քայլատրվում է Մի քանի նման վարժութուններ անելով, ուսուցիչը վարժեցնում է յերեխաներին գրելը լսողությամբ. ուսուցիչն արտասանում է թվերը, աշակերտները գրում են տեսրակներում (10-րդ պե):

2. Ստուգողական և կրկնողական վարժություններից հետո, վորոնք հիմնականում պետք է պարզեն, թե վորքան է աշակերտը հասկանում թվի կազմութունը և կարողանում է, արդ՞ք, տարբերել տվյալ շարքի միավորների տեղը, ուսուցիչն անցնում է յեռանիշ թվերի գումարմանը և հանմանը, միայն դեռ այնպիսի թվերի, յերբ գումարման ժամանակ տամյակներ և հարյուրյակներ չեն ստացվում, որինակ— 325 + 112 և հանման ժամանակ էլ փոխ չի առնվում, որինակ— 437 — 112: Գումարումն ու հանումն կատարվում է միաժամանակ: Աշխատանքը կառուցվում է համարակալի վրա վարժություններ անելու և միևնույն ժամանակ տեսրակների մեջ գրելու միջոցով: Յերբ ուսուցիչը համոզվում է, վոր աշխատանքը չի դժվարանում, յերեխաներին կարելի յե առաջարկել նրանց գրավոր և ինքնուրույն կերպով կատարելու 5-6 վարժություններ: Աշխատանքի ընթացքում աշակերտները կարող են ուզովել համարակալով: Ուսուցիչը պետք է ուշադիր կերպով հետևի աշակերտների աշխատանքներին: Նախ քան կատարած աշխատանքի զնահատական տալը, ուսուցիչն առաջարկում է աշակերտներին, վարժությունները վերջացնելուց հետո, միմիայն ստուգել (ըստ նստարանների) (25-րդ պե):

3. Աշխատանքի մեջ կենդանութուն և յերեխաների մեջ հետաքրքրութուն առաջացնելու համար, դասի վերջում կազմակերպել մի քանի որինակների ճիշտ և արագ կատարելու մրցախաղ: Սահմանվում է որինակները կատարելու ժամանակը. դասարանը բաժանում յերկու ժամի (բանակի):

Ամեն մի մասից գրատախտակի մոտ կանչվում է մի աշակերտ. ուսուցիչը յերկու սյունյակ որինակներ է գրում: Աշակերտներից վորը շուտ և ճիշտ կատարեց որինակները, նա յել խաղը տանում է: Աշակերտների ամեն մի պարտիան հետևում է իր ընկերոջը— ներկայացուցչին, ստուգում և ոգնում է նրան: Մրցողների այդ դույզից հետո, կարելի յե դուրս բերել ուրիշ դույզ (յեթե ժամանակ կա) և խաղը կրկնել (5-րդ պե):

4. Դասից հինգ րոպե մնացած ուսուցիչը տան համար վարժություններ է տալիս: Այդ վարժությունները նպատակ ունեն ամրացնելու դասարանում ձեռք բերած ունակությունները: Տան համար տրվելիք առաջադրությունները մանրամասնորեն բացատրվում են:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՊԼԱՆԸ
I-ԻՆ ԱՍՏ. III խՄԲԱԿԻ.

ԹԵՄԱ. — Ցամաքի մակերեվույթի ձեվի փոփոխությունը քրի յեվ քամու ներգործությունից.

ԺԱՄԱՆԱԿ. — 1-ԻՆ ՔԱՌՈՐԴ. ՄՈՏԱՎՈՐԱՊԵՍ ՀՈԿՏ. 2 ԴԵԿԱԴԱ:

Թեմայի մշակման համար անհրաժեշտ է վոչ պակաս 2 ժամ. իսկ եքսկուրսիայի հետ միասին՝ ամբողջ 4 ժամ, սակայն այստեղ դասը տրվում է առանց եքսկուրսիայի դասի նախապատրաստությանը:

1. Մտածելով դասի պլանը և ծանոթանալով նյութի հետ, ուսուցիչը պետք է անպայման պարզի կի՞նք արդյոք դպրոցի մոտերքում՝ հեղեղատից հարվածք, դեռ կամ մեկ վորևե քամանարված տեղ (վերջինս մեծ մասամբ լեռնամասերում), ուր յերեխաների հետ պետք է եքսկուրսիա կատարել: Աշխարհագրության նյութի մշակման համար եքսկուրսիան ունի այնպիսի մեծ նշանակութուն, վոր նրանից հրաժարվել կարելի յե միմիայն այնպիսի խոշոր քաղաքներում, ուր նման եքսկուրսիաների համար անհնարին է գտնել դիտելու առարկայից: Մնացյալ մյուս վայրերում, յեթե ուսուցիչը մանրազնին զբաղվում է այդ խնդրով՝ փնտրել շրջապատում, հարցնել յերեխաներին— նա միշտ կարող է գտնել ինչ նայել՝ չհեռանալով դպրոցից շատ հեռու: Ընտրելով եքսկուրսիայի վայրը, ուսուցիչն ամենից առաջ ինքն է դիտում, նշանակում է թե եքսկուրսիային յերեխաներն ինչ պիտի ստանան (որինակ— եքսկուրսիա դեպի հեղեղատների կտրվածքը՝ ջրի լվացման պրոցեսը, հողի տակի շերտերի ծանոթութունը, հեղեղատի փրվածքներից առաջացած փսաները և այլն...), եքսկուրսիայի համար վերջան ժամանակ է պահանջվում, ինչպիսի աշխատանք պիտի մշակել վոր յերեխաների հիշողության մեջ ամրապնդվի, վորպեսզի նկարել հեղեղատից փրվածքը, չափել, նմուշների ընտրութուն կայացնել կոլեկցիայի համար, լուսանկարներ և այլն... Յերեխաների կազմակերպումը եքսկուրսիայի ընթացքում: Դեկադային (դասաբաշխման) ցուցվի մեջ անպայման մտցնել եքսկուրսիան, միայն նրան պետք է հատկացնել վերջին յերկու ժամերը, վորովհետև պետք է ինկատի ունենալ, վոր դա կարող է միշտ էլ ձգձգվել:

2. Եքսկուրսիային պատրաստվելու հետ միասին, ուսուցիչն անհրաժեշտ են աղյուսակներ և նկարներ, վորտեղ պատկերացվեյին՝ հեղեղատների փրվածքները, գետափի լվացվուսը, ծանծաղուտներ, ժայռերի հողմահարված որինակներ: Յեթե դպրոցում համապատասխան աղյուսակներ չկան, ապա նկարներ կարելի յե գտնել համապատասխան գրքերում՝ ֆիզիքական աշխարհագրության և յերկրաբանության մեջ: Ընդհանրապես դպրոցում կամ գրադարանում ուսուցիչը պետք է գտնի համապատասխան նկարներ և իր հետ տանի դասարան, այլ կերպ զժվար կլինի դասի բացատրելը յերեխաներին և դասը տխուր կանցնի:

3. Անհրաժեշտ է 2-3 արկղ պատրաստել, ուշ ավագ ածել կավի հետ խառնած, վորպեսզի յերեխաներն իրենք ձեփեն հեղեղատի կտրվածքը, գետափի լվացվածքը, հողմահարված սյունները և այլն...

4. Յեթե դպրոցում կա մոզական լապտեր կամ կինոսպարտ, անհրաժեշտ է դասից հետո կամ գոնե յերեկոները յերեխաներին ցույց տալ դիապոզիտիվներ «Յերկրի կլանքը» սերիաներից կամ համապատասխան կինոֆիլմից: Այստեղ էլ ևս անհրաժեշտ է, վոր ուսուցիչը նախորդ նայի և հավաքի բոլոր դիապոզիտիվները և ֆիլմաները:

Վերջապես, յեթե դպրոցը գտնվում է մի այնպիսի վայրում, ուր հեղեղատների փրվածքները կամ գարնանային ու ամրան ջրերը լուրջ վտանգներ են սպառնում ժողովրդական տնտեսությանը, որինակ— ներքին Վոլգան, Հյուսիսային Կովկաս, կամ ուր կան շատ շարժվող ավազներ (Կազակստան, Միջին Ասիան), ուսուցիչն անպայման բացատրում է, վոր շրջաօրով, տեղական կազմակերպությունների միջոցով, նախաձեռնում է միջոցներ այդ յերևույթների դեմ կովելու և ընդգրծում է ձևեր՝ յերեխաներին ևս մասնակցելու այդ աշխատանքների մեջ:

Յերբ ուսուցիչն այս ձևով պատրաստվում է դասին և ունի ձևաքե-
տակ բոլոր անհրաժեշտ պարագաները, դասը տանում է մոտավորա-
պես հեռակալ պլանով:

I.—Նախ համառոտ կրկնում է նախորդ դասի բովանդակությունը,
հիշեցնում է յերեխաներին, թե մակերևույթների ինչ ձևեր գիտեն և
շարունակում է, վոր դրանից շատերի առաջացմանը, ինչպես որի-
նակ՝ կզոռ, թերակզոռ մեծ մասնակցություն ունի ջուրը... (5-7 րոպե):

II.—Որինակի համար ցույց է տալիս հեղեղատից առաջացած փըլ-
վածքի նկարը և հարցնում է—ինչ է այս: Ստանալով անհրաժեշտ պա-
տասխանը, հարցերի միջոցով պարզում է՝ վորտեղ են յերեխաները
տեսել հեղեղատների կտրվածքներ, և ինչպիսիները: Ինչ մեծություն
են լինում, շատ են մեր վայրերում, միատեսակ մեծություն են լի-
նում, միշտ միատեսակ մեծություն են լինում, թե ամեն տարի մեծա-
նում են, ինչո՞ւ նրանք առաջացան:

Պատասխանների դեպքում, ուսուցիչը պետք է հիմնվի նրանց հե-
տադետման գիտություն պաշարի վրա և միշտ հարցնի. «Իսկ դու ինքդ
այդ տեսել ես: Վորտեղ: Չե՞ս կարող գրատախտակի վրա նկարել քո
տեսած հեղեղատի կտրվածքը: Գուցե այդ ինքդ կարդացել ես գրքում:
Վոր գրքում: Վորտեղ ես գտել: Այդ գրույցին հատկացնել 10—15
րոպե:

III.—Ուսուցիչը հետո աշակերտներին առաջարկում է, բաժանելով
նրանց արկղների թվի համապատասխան ողակների, իրենց ձեռքի հե-
ղեղատների կտրվածքներ, գետափ (փլվածք) կամ ծանծաղներ (այստեղ
կարևոր է ջուր, վորը վաղորդը պետք է պատրաստի ունենալ): Յեթե
ուսուցիչը հեղեղատների փլվածքների փոխարեն ցույց է տալիս հողմա-
հարված ժայռերի նկարները՝ աշակերտները պատրաստում են նրանց
նմանները և այլն... Նման աշխատանքը քիչ ազմուշ կառաջացնի դա-
սարանում, վորոշ անկարգություն, գուցե և քիչ էլ դասարանը կեղ-
տոտի, սակայն շատ է հետաքրքրում յերեխաներին, լավ է ամրաց-
նում գիտելիքները և աշխուժացնում է դասը: Սրան պետք է հատ-
կացնել 15 րոպեից փոչ պակաս:

IV.—Այս աշխատանքը վերջացնելուց հետո, ուսուցիչը համառոտ
պատմում է, ինչու առաջացան հեղեղատների փլվածքները, ինչպիսի
փաստներ են հասցնում գյուղական տնտեսություններին և ինչպես
պետք է կռվի դրանց դեմ: Յեզրակացությունը գրվում է գրատախ-
տակի վրա և աշակերտների տետրում: Ուսուցիչը յուր պատմվածքը
անպայման պետք է ցուցադրի նկարներով՝ գրատախտակի վրա՝ իբր
չրջանի պրակտիկ աշխատանքներից (պայքար հեղեղատների փլվածք-
ների դեմ): Ուսուցչի պատմվածքի համար հատկացվում է 15 րոպե:
Հետո ուսուցիչը տալիս է տան առաջադրությունը և նշում է՝ ո՞ւր,
յե՞րբ կգնան եքսկուրսիայի, վորին պահանջում է 5—7 րոպե:

Եքսկուրսիան կատարելուց հետո, ուսուցիչն աշակերտների հետ
միասին մշակում են խմբակի մասնակցություն հեղեղատի փլվածքի
դեմ պայքարելու պլանը, ակերի ամրացման, պայքար տվադի դեմ և
այլն:

Այս դասի պլանը կազմված է այն դպրոցի համար, վորի աշակերտ-
ները ծանոթ են հեղեղատների փլվածքի կտրվածքի—խոռոչների հետ,
ավիտի յվացման և ընդհանրապես հնարավորություն ունին բնություն-
նը գիտելու: Յեթե մենք գործ ունինք քաղաքի դպրոցի հետ, դասը

պետք է սկսել ուսուցչի պատմությամբ՝ ջրի և քամու ներգործության
մասին, մեծ ժամանակ գործադրելով պատկերների ուսումնասիրու-
թյան վրա, իսկ եքսկուրսիային կփոխարինի կինո-դասերը: Ինքն ըստ
ինքյան վերանում է անմիջա կան աշխատանքի հարցը՝ պայքար հեղե-
ղատների փլվածքների դեմ և այլն: Սակայն այն քաղաքի պայմանե-
րում, ուր կա ջրանցք, կարելի չէ յերեխաներին առաջարկել տանը
փորձել՝ ավադի և հողի լվացվումը ջրով:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ V-Դ ԽՄԲԱԿՈՒՄ.

(Դասին հատկացվում է 3 ժամ).

ԹԵՄԱ.—Ծանոթություն գոյական անվան հետ: Գոյական
անուն իբրև բառ, վորը ցույց է տալիս վորչիվե առարկա
(իր, մարդ, կենդանի, բնության յերեվոյքներ, դեպի, ընդհան-
րապես այլ, ինչի մասին կարելի չէ հարցնել ո՞վ կամ ի՞նչ):

Նոր ծրագրով խոսքերի մասերի հետ յերեխաներին պետք է ծանո-
թացնել համաձայնություն (բերական), այսինքն ավարտված ամբող-
ջական խոսքի—արտահայտություն վերլուծության հիման վրա:

Մասերի հետ ծանոթությունը սկսվում է գոյականից, իբրև խոսքի
այնպիսի մասի, վորն ավելի կոնկրետացած է յերեխաների հասկացո-
ղություն մեջ և վորն մշակման ընթացքում առանձին դժվարություն-
ներ չի ներկայացնում:

Յերեխաներին խոսքի վորևե մասի հետ ծանոթացման դասի ընթաց-
քը պայմանավորված է հետևյալ սխտեմայով, վորն ունի յոթ աստի-
ճան (ևտապ):

- I աստիճան.—Գրելու նյութի դասավորումը.
- II " —Առարկաներ ցույց տվող բառերի ընտրություն (բառի լայն իմաստով).
- III " —Ընտրված բառերի վերլուծումն ըստ նրանց բովան-
դակության (ինչ են նրանք ցույց տալիս).
- VI " —Յեզրակացություն, վորը բնորոշում է խոսքի մասը
համաձայն նրա բովանդակության:
- V " —Խոսքի առանձնացված մասի վերլուծությունը նրա
ձևի կողմից, այսինքն նախադասության այլ բա-
ռերի հետ կապված՝ խոսքի ձևի փոփոխության
կողմից:
- VI " —Յեզրակացություն—խոսքի այս կամ այն մասը
բնորոշող վերջավորությունների փոփոխության
մասին:
- VII " —Խոսքի մասի ձևական կողմի ավելի մանրամասն
ուսումնասիրություն:

Խոսքի մասի ուսումնասիրություն ամբողջ ընթացքի համար աշխա-
տանքի առաջին աստիճանը պետք է յերակետ ընդունել, ուստի նյութի
կազմակերպմանը պիտի մոտենալ առանձին ուշադրությամբ:

Նյութն այսպես կազմակերպելով, պետք է աշխատել, վոր նա ցայ-
տուն ու աչքի ընկնող առարկայություն հազեցած լինի, միաժամա-
նակ գոյականների հասարակ հավաքածու չլինի: (Ավելի նպատակա-

հարմար ե ու լավ, յերբ նյութն ուսուցչի կողմից պատրաստի կերպով չի առաջադրվում, այլ ուսուցչի վորոշ առաջադրութեամբ տալիս են իրենք—յերեխաները:

Տալիս ենք այսպիսի առաջադրութեան. «Մայիսմեկը... ցույցին քաղաքի կենտրոնական հրապարակում մենք ինչ ենք տեսնում»: Կողմնակի վարդապետական հետևանքով (ուսուցչի ոգնությունը և ցուցմունքներով) կատարվի հետևյալ բնագիրը. — Ամբողջ հրապարակը լիքն է ժողովրդով, ամենուրեք ծածանվում են գրողակները և լավում են նվագածութեան ձայներ: Ահա գալիս է գործը՝ հաստատուն ու կանոնավոր շարքերով: Մա հետևակն է: Հետևակներից հետո շարժվում է և հրետանին՝ թնդանութներով ու գնդացիներով: Ահա և հեծելազորը՝ ձիերին հեծած ու նիզակավորված: Առաջնորդներն ամբիոնից արտասանում են «ընկերներ, մենք պատերազմ չենք ուզում, բայց թշնամուն հակահարված կտանք»: Գործարանների բանվորները քայլում են կանոնավոր շարքերով: Իրողակների ու պլակատների վրա, վեր տանում են բանվորներն ու բանվորուհիները, գրված են մայիսմեկյան լողունգներ: Իրողակներով ու պլակատներով հրապարակ են մտնում նաև կոմյերիտները, իսկ կոմյերիտներին հետևում են պիոներները կարմիր փողկապներով: Պիոներների կարմիր փողկապները փայլում են արևի լույսի տակ: Ամենուրեք ուրախ դեմքեր»:

Այժմ մենք պետք է առարկաներ ցույց տվող բառերն առանձնացնենք: Դնում ենք այսպիսի խնդիր. — Յերեխաներ, ինչ ենք տեսնում մենք քաղաքի հրապարակում, մեզ շրջապատող մայիսմեկյան պայմաններում: Ընդգծեցեք բառեր, վորոնք ցույց են տալիս այն ամենն, ինչ վոր աչքի յն ընկնում:

Աշակերտներն առանց դժվարութեան առանձնացնում են (դուրս գրում) առաջի հերթին այսպիսի բառեր. հրապարակ, ժողովուրդ, գրողակներ, թնդանութ, գնդացի, հեծելազոր, ձի, նիզակ, բանվոր, պլակատ, լողունգ, կոմյերիտ, պիոներ, կարմիր փողկապ, ուրախ դեմքեր, և այլն: Առարկաներ ցույց տվող բառերի մասին առաջին յեղրակացութեանը հանելու համար այս բառերով կարելի յե սահմանափակվել, վորպեսզի անցնենք մեր աշխատանքի III-րդ աստիճանին:

Դնում ենք այսպիսի հարց. — «յերեխաներ, ինչ են նշանակում ձեր այդ դուրս գրած բառերը»: Յերեխաները պատասխանում են, վոր նշանակում են առարկաներ, մարդիկ, կենդանիներ: «Ինչպիսի հարցեր ենք տալիս այդ բառերի համար» ինչ (դրոշակ, թնդանութ, գնդացի...) կամ հիվ (ժողովուրդ, հեծելազոր, բանվոր, կոմյերիտ, պիոներ...)

Մրանից կատարում ենք այսպես ասած առաջին—նախնական յեղրակացութեանը, վոր այն բառերը, վորոնք ցույց են տալիս առարկաները, մարդիկ և կենդանիները կկոչվեն գոյական «նաևներ, վորոնք համար տրվում է «ինչ» և «հիվ» հարցերը: Այս յեղրակացությունն ամրացվում է որինակներով, վոր բերում են աշակերտներն ուսուցչի տված հարցերի հիման վրա: Որինակ, «ինչ ենք տեսնում դասարանում» «ինչ եք տեսնում ամառն անտառում», «հիվ է բնակվում քաղաքում», «հիվ է ապրում անտառում» և այլն:

Մայիսմեկյան ցույցի մեր նկարագրութեանից չկան արդյոք դեռ բառեր, վորոնց նկ ամամբ կարելի լինի դնել «ինչ» հարցը. — «ինչ է լավում. — նվագածութեան ձայներ», «ինչ են արտասանում առաջնորդներն ամբիոնից. — ճառեր». «ինչ ենք մենք կամենում և ինչ կտա-ժ

թշնամուն, յեթե նա այդ անի... Մասնորոշում չենք ուղում, բայց թըշնամուն հակահարված կտանք» և ցույց տալիս — ինչ

կատարում ենք յերկրորդ արդեն լրացուցիչ յեղրակացութեանը. — այն բաները, վորոնց մասին կարող են ճարգցել տալ ինչ կամ այս հիվ է, կոչվում են գոյական անուններ: Յեղրակացութեան ամրացում ենք արհեստներով ինչ է լավում անտառում. քանու ձայնը, թռչունների յեղը տերևների զշշուտուն... ինչ կարող ենք դիտել անտառում, ինչպիսի յերեխաները, վորոնք ենք աշխատանքը, քանից արվելը, վագրը և այլն: Ամբողջում մայիսմեկյան ցույցի մասին յեղրակացութեանը, վոր այն բառերը, վորոնք ցույց են տալիս յերեխաներ, պատերազմ, մարդիկ, կենդանիներ, վորոնք համար կարող ենք ինչ կամ հիվ հարթե տալ կոչվում են գոյական անուններ: Այս յեղրակացութեանը, այս սահմանում (վորոշումը) հիմնավորված է որս վրա, վոր այն «ինչ ավել սովորական է կամ հաճախ է արհեստներում (ինչին) միանգամայն հասկանալի կլինի ուսման V-դ տարվա յերեխաների համար:

Անցնում ենք գոյականների վերլուծութեանը՝ նրա ձևի կողմից (աշխատանքի V-դ աստիճանը): Մայիսմեկյան ցույցի մեր նկարագրութեանից դուրս ենք գրում միևնույն այն բառերը, վորոնք հանդիպում են այլ բառերի հետ տարբեր ձևով կապված. «Հետևակ—հետևակների հետևից, դրոշակներ—դրոշակների վրա, կարմիր փողկապներ—փողկապներով, պիոներներ—պիոներների»: Միևնույն բառերն ինչու մենք արտասանում և գրում ենք տարբեր ձևերով: Ասվում է արդյոք. հետևակն հետո շարժվում է հրետանին: «Այս հետևակն է» նախադասութեան մեջ «հետևակ» բառին ինչպիսի հարց կարող ենք տալ, իսկ ինչպիսի հարց պիտի տալ «հետևակներից» բառին— «հետևակներից հետո շարժվում է հրետանին» և այլն:

Այսպիսով յերեխաները պարզում են, վոր նախադասութեան մեջ գոյականները շնորհիվ մյուս բառերի հետ իր տարբեր կապակցութեան, գործադրվում են տարբեր ձևով և վոր ըստ նախադասութեան մեջ գտնվող բառերի տարբեր կապի յել նրանց արվում են տարբեր հարցեր. — ինչ, ինչի, ինչի հետ, ինչի վրա կամ թե հիվ, հիվ, հիվից և այլն:

Այս դիտողութեանների հետևանքով, աշակերտներն յեղրակացում են այն, վոր գոյականները փոխում են իրենց վերջավորութեանները, նախադասութեան մեջ այլ բառերի հետ ունեցած կապի համաձայն (VI-րդ աստիճան):

Այս յեղրակացութեանն, պիտի խորացվի գոյականների հոլովման ձևերի մանրամասն ուսումնասիրութեամբ (տես VII-դ աստիճան):

Այս աստիճանի աշխատանքն անցնում է հետևյալ կարգով:

1. Որինակներ ընտրվում են ամբողջական խոսքից, վորի մեջ միևնույն գոյականը հանդիպում է տարբեր վերջավորությունում (որինակ. — «աշխատանքն անցյալում համարվում էր ծանր ու անթափախ, իսկ սոցիալիստական հասարակարգում աշխատանքին բնորոշին այլ կերպ ենք վերաբերվում: Աշխատանքից մենք փոչ միայն չենք վախենում, այլ նրանով մենք հպարտանում ենք աշխատանքում մենք տեսնում ենք պատվ, փառք, առաքինութեան ու հերոսութեան գործ»):

2. Տվյալ որինակներից գոյականները արտաբերվում և կոչվում սյունյակներով և հարցերի հետ միասին և դրագրվում հետևյալ կարգով.

ինչ—աշխատանքի
ինչի—աշխատանքի
ինչին—աշխատանքին և այլն.

13-4183a

3. Առանձնացվում են և դուրս գրվում գոյականների վերջավորութ-
յունները (աշխատանք (ի), աշխատանք-(ին)...))

4. Տրվում են «հոլովման» տերմինները (գոյականների վերջավորու-
թյունների փոփոխումն, ըստ նախադասության այլ բառերի հետ
նրանց ունեցած կապի) և հոլովները (գոյականի յուրաքանչյուր փո-
փոխումն ունի իր անունը—«հոլովը»—ուղղական, սեռական և այլն).

5. Ընտրել հոլովման յերեք հիմնական ձևերի գոյականներ 1.
աշխատանք, դրոշակ 2. ձի, 3. ընկեր, կին և այլն:

Հասկանալի չե, վոր գոյականների հոլովման ձևի ուսումնասիրումը
միայն մի դասում չի կատարվում. նա ընթանում և աստիճանաբար
գոյականների աշխատանքի հետ զուգընթաց, միաժամանակ կապե-
լով այդ ընթերցանության ու վոճի զարգացման հետ:

Г.П.Б. в ЛНГР.

Аз. 1933 г.

АКТ № 124

Халқ Мәариф Комисарлыгы
Тәдрис-Метод Сектору

N i m u n ə v i

Metodiki işləmələr sborniki

(7 illik məktəblərin I və II konsentri ucyn)

I kitab.

AZƏRNƏŞR — 1932

<< Ազգային գրադարան



NL0248607

10. 585